Պարույր Սևակ

Ծերանում ենք

Ծերանում ենք, Պարո՛ւյր Սեվակ,
Ծերանում ենք, սիրելի՜ս,-
Հասակակից կանանց արդեն մենք նայում ենք եղբոր պես,
Նկատում ենք մատղաշներին,
Որոնք մեզ չեն նկատում.
Ամեն մի նոր ծանոթություն չի վերջանում էլ սիրով,
Ոչ էլ երգով մի անարվեստ, բայց պոռթկուն ու կրակված...
Ծերանում ենք, Պարո՛ւյր Սեվակ,
Ծերանում ենք, սիրելի՜ս.-
Մեր ապստամբ մազերն արդեն կա՛մ պատրժվել են մահով,
Կա՛մ իշխանաց իշխան սանրի խեղճ հպատակն են դարձել.
Մեր խռովկան մատներն արդեն դարձել են հեզ ու լսկան,
Իսկ դավադիր մեր ոտքերը՝ ընտանեսեր-տնասեր...
Ծերանում ենք, Պարո՛ւյր Սեվակ,
Ծերանում ենք, սիրելիս.-
Մե՛կ օր խմում
Եվ երկո՛ւ օր արդեն խումար ենք ընկնում,
Մե՛կ ժամ քայլում
Եվ երկո՛ւ ժամ խոսում դրա օգուտից
Կամ վնասից,
Եվ ըստ որում խոսում այնպե՜ս լրջորեն,

Կարծես մի մեծ գյուտ ենք արել
Կամ հերքում ենք մի հին գյուտ.
Եվ «բուժվել» կամ «հիվանդություն» բառերն արդեն օրեցօր
Հոլովվում են ու խոնհարվում ավելի շատ և նույնիսկ
Առավել քիչ դժգոհությամբ,
Քան թե թաքուն պարծանքով...
Ծերանում ենք, Պարո՛ւյր Սեվակ,
Ծերանում ենք, սիրելի՜ս.-
Թափառելու ժամ չի մնում,
Չենք հասցրնում ձանձրանալ.
Քիչ ենք թախծում մենք անառիթ,
Շատ ենք տխրում առիթով.
Քիչ ենք կարդում, շատ ենք գրում,
Շատ ենք խորհում, քիչ քնում,
Որովհետև «անքնություն» բառը դարձել է սոսինձ
Եվ ուզում է մեր քրքրված ջղերն իրար կպցրնել...
Ծերանում ենք, Պարո՛ւյր Սեվակ,
Ծերանում ենք, սիրելի՜ս,
Ծերանում ենք, սակայն կարծես
Դարձյա՛լ խելքի չենք գալիս.-
Դեռ հիմա՜ էլ զարմանում ենք.
Դեռ կարո՜ղ ենք զարմանալ,
Ժամացույցի սլաքները ետ ենք տալիս մտովին,
Ի՜նչ է թե մեր արդեն չարածն իբրև անենք աշխարհում.
Անկարելի հաղթանակի ելք ենք ճարում ինչ-որ կերպ.
Երբեմն էլի այս աշխարհն ենք դեռ չափչփում հուսալից
Դոն-Կիխոտի ոտքեր կոչված նո՛ւյն կարկինով ծայրամաշ.
Իսկ երբ մեկը խոր քնի մեջ մեր երազն է կոխկրտում,
Առաջվա՛ պես... առաջվա՜ պես վեր ենք ցատկում ճչալով...
Ծերանում ենք, Պարո՛ւյր Սեվակ,

Սակայն... խելքի չե՞նք գալիս...

10.XII.1963թ.
Երևան